

ՎՐԱՅՑ ԿԵՆՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Վիպագրող Դ. Կլդիաշվիլին և նրա նոր պատմութեան— Չափաքերական գրութեան—
ներքին գերը վրաց մամուլում— Վերջին ամսուայ բանաստեղծութիւնները

«Մոմարէ» ամսագրի այս տարուայ առաջին համարում,
որ լոյս տեսաւ փետրուարի վերջին, տպուած է տաղանդաւոր
վիպասան Դ. Կլդիաշվիլու մի պատմութեան «Միքէլա» (Միքա-
յէլ) վերնագրով: Այդ երիտասարդ գրողը, ինչպիսի մենք մի
անգամ էլ ասել ենք մեր ամսագրում, իր պատմութեաների
նիւթը վերցնում է գլխաւորապէս Քութայիսի նահանգի մանր,
աղքատացած ազնուականների կեանքից: Այդ ազնուական-
ները, որոնց թիւը չափազանց շատ է վերոյիշեալ նա-
հանգում, չկարողացան յարմարուել ճորտութեան վերանա-
լուէն հետևող կեանքի նոր պայմաններին մեր երկրում:
Ուրիշի քրտինքով ապրելուն ընտելացած, լուրջ ու տոկուն աշ-
խատանքին անսովոր, նրանք աղքատացան կարճ միջոցում,
վատնելով իրանց ձեռքումը մնացած կալուածների մեծ մասը
կամ նոյնիսկ բոլորը: Բայց իմերել ազնուականը հալարտ է,
օժտուած դասակարգային պատուասիրութեամբ... Խնչ անենք,
որ աղքատ է. նա ունի խելք և ահա այդ խելքի միջոցով նա
հազար ու մի ճանապարհ է գտնում, որպէսզի կարողանայ փող
պոկել, ումից որ միայն կարելի է... Այդ ճանապարհը գցում
է նրան յաճախ միաժամանակ թէ՛ շատ ողբալի և թէ՛ շատ կո-
միկական դրութեան մէջ, և ահա այդ դրութիւնն է, որ մեզ
ներկայացնում է պ. Կլդիաշվիլին վերին աստիճանի կեն-
դանի կերպով իր մի շարք գրութեանում: Այդ կողմից աննը-
ման են մանաւանդ նրա «Մոլոմոն Մորբելաձէ» և «Սամանա-
շվիլու խորթ մայրը» ընդարձակ, մօտ հարիւր երեսանոց պատ-
մութեաները:

Իր միւս գրութեաներում երիտասարդ վիպագրողը շօշա-
փում է նաև իմերել ժողովրդի կեանքի ուրիշ կողմերը. այդ-
պէս, մենք տեսնում ենք նրանց մէջ գիւղական յամառ նախա-
պաշարմունքների, տգէտ փաստաբանների (աբլակատների),

հին և նոր քահանայական տիպերի, կնոջ ցաւալի դրութեան և այլ նկարագրութիւններ: Նա, դժբախտաբար, շատ սակաւագիր է: Ահա ամբողջ տասը տարի է, որ նա բնլլետրիստ է, տասը տարի է, որ իր վրայ է դարձրել ամբողջ վրաց ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը և այդքան ժամանակում տուել է ընդամենը մօտ մի տասնհալ պատմութեամբ, որոնցից շատերը ունեն ոչ աւելի քան քսան, երեսուն, քառասուն երես... Պէտք է յիշել վրացի և հայ գրողների ընդհանուր սրբտաճմիկ վիճակը. նրանք բոլորը հաց են ճարում կողմնակի աշխատանքով, ծանրաբեռնուած յաճախ մինչև ուժասպանութիւն... Պ. Կլիբաշվիլին պաշտօնով սպայ է...

Վերոյիշեալ «Միքէլա»-ն, որ բռնում է «Մոսմէի» 18 երեսը, բաց է անում մեր առաջ իմերել ժողովրդի նախապաշարմունքների աշխարհը: Ծերունի Միքէլայի բազմամարդ, նահապետական ընտանիքում մի ինչ-որ օտարոտի համաճարակ է սկսւում. կարճ միջոցում մեռնում են նրա բոլոր որդիները, հարսների և թոռների մեծ մասը: Կենդանի են մնում միայն քսանամեայ թոռ Սպիդոնը և հարս Մայան իր տասնամեայ Նեստոր որդով: Միքէլան չափազանց կրօնասէր ու հեզ մարդ է. նա անտրտունջ տանում է այդքան դառն կսկիծները՝ «փառք Աստծու, ամեն բան Իր կամքով է լինում» ասելով: Բայց ահա մի օր հիւանդանում է նաև նրա պաշտելի Սպիդոնը ու ընկնում լետարգիական քնի մէջ: Անմխիթար պապը նորից թաղման պատրաստութիւններ է տեսնում, բայց հիւանդը յանկարծ զարթնում է, նոր լուրեր պատմում «այն աշխարհից»: Նա ի միջի այլոց, յայտնում է, որ «այն» աշխարհում նրան դարձեալ մի տարի ժամանակ տրուեց ապրելու: Գիւղում ահագին իրարանցում է ընկնում, Միքէլայի տունը դառնում է մի տեսակ ուխտատեղի. գիւղացի կանայք ամբողջ օրը անց են կացնում նրա անկողնի կողքին ու տեղեկութիւններ ուզում իրանց հին ու նոր մեռելների վիճակի, նրանց գոհունակութեան, հանգրստութեան և կամ այն մասին, թէ որը նրանցից էլի կարիք ունի նոր գոհի ու ժամ-պատարագի՝ մեռելատէրերի կողմից... Ծերունի Միքէլան անպայման հաւատում է «այն» աշխարհից բերած լուրին, թէ Սպիդոնը պէտք է մի տարուց յետոյ մեռնի: Այդ հաւատը բոլորովին յեղաշրջում է նրա նախկին կրօնական հնազանդութիւնը: Նա այժմ այն կարծիքի է, որ իր տանը վաղուց ի վեր բուն են դրել չար ոգիները, որ այդ ոգիները ապրում են այժմ Սպիդոնի մէջ և որ նրանից դրանք կարող են անցնել նաև փոքրիկ Նեստորի մարմինը ու սպանել նրան էլ: Այստեղ դժբախտ ծերունու յուսահատութիւնը այլևս սահ-

ման չունի. նա սարսափելով տեսնում է, որ իր սերունդը պէտք է սպառուի, «օջաղը (հնոցը) սառչի»... Այդ օրից նա զգում է մի սարսափելի ատելութիւն դէպի անկողնումը տառապող, դիակի կերպարանք առած Սպիդոնը: Նետտորին շտապով հեռացնում է մի ուրիշ գիւղ և սկսում է տունը մաքրել չար ոգիներէից: Այդ նպատակով նա առաջ հիւսում է ծառի ճիւղերից մի հաւաքնի նման տնակ բակի հեռաւոր անկիւնում և այնտեղ գետնի վրայ պառկեցնում թշուառ հիւանդին: Ապա նա քանդում է իր փայտեայ տունը և նրա բլրոյ կտորները մէկ-մէկ սրբելով և տաք ջրի մէջ անցկացնելով՝ տեղափոխում նրան ընդարձակ բակի մի ուրիշ կողմ: Սպիդոնը մնում է իր հաւաքնում անխնամ, անտէր և խեղդւում մի գիշեր՝ սաստիկ հեղեղից քանդուած հաւաքնի փլատակների տակ...

Անասելի ճնշող տպաւորութիւն է թողնում պ. Կլդիա-շվիլու այդ վերջին աշխատութիւնը ընթերցողի վրայ...

Յիշենք այժմ մի քանի լաւ ոտանաւոր, որ լոյս են տեսել մեր հաշուետուութեան ամսում: Պէտք է առհասարակ ասել, որ շատ քիչ ազդ կարող է գտնուել աշխարհիս երեսին, որ այնքան սիրահար լինի չափաբերական գրուածքի, ինչպէս վրացիք: Նրանք դարերից ի վեր սովոր են, նախ և առաջ, անգիր անելու Շոթա Ռուսթաւելու եթէ ոչ ամբողջ հռչակաւոր պոէման («Ըն-ձենաւորը» — «Վեփիխս-տղասօսանի»), գոնէ նրա կտորներից շատ շատերը. վրացի «մետալիքէ» (պարկապուկ) ժողովրդական երաժիշտները ամբողջ պատմութիւններ են արտասանում ոտանաւորի ձևով իրանց դործիքի դաշնակցութեամբ և յանպատրաստից յանգաւոր խօսքերի տարափ թափում հանդիսատեսների դէմքի, հագուստի ու բնաւորութեան համապատասխան՝ նրանց հաճոյանալու և նրանց առատաձեռնութիւնը զբոգեցնու համար. վրաց մամուլի էջերը շարունակ լիքն են լինում ոչ միայն սովորական ոտանաւորներով ու պոէմաներով, այլև ոտանաւորախառն — եթէ կարելի է այդպէս ասել — թղթակցութիւններով... Ահա տեսնում ես, մի թղթակից հանգիստ սրտով նկարագրում է իրանց գիւղում պատահած մի անցք, մէկ էլ տեսար՝ մուսաները յանկարծակի այցելութեան եկան նրան, և նա լարեց իր սաղն ու ոտանաւորով վերջացրեց նկարագրութեան միւս կէսը...

Վրաստանի օդը՝ մի խօսքով՝ ներշնչում է սէր դէպի ուտանաւոր, երաժշտական, բանաստեղծական խօսքը, և այդ է հ-

րևի պատճառը, որ մեր դրացիներն ունեն այսօր մի շարք այնպիսի ընտիր բանաստեղծներ (մեռած, ծերացած կամ երիտասարդ), որոնց նման, ասեղ, շատ քիչ ունենք մենք հայերս...

Պարբերական հրատարակութիւններից ամենից շատ բանաստեղծութիւններ է տպում «Իվերիան»։ այդ ամենօրեայ լրագրում ամիսը լոյս է տեսնում միջին հաշուով ոչ պակաս քան քսան ոտանաւոր։ Ընթերցողի համար հեշտ է մակարեւել, որ այդ ընտրութիւնը կատարում է խմբագրութիւնը իր ստացած եռապատիկ և քառապատիկ աւելի նիւթից։ Եւ արդարեւ, եթէ մենք աչքի անցնենք յիշեալ լրագրի պոստ-արկղ կոչուած ամենօրեայ բաժինը, կը տեսնենք, թէ ի՞նչ մեծ քանակութեամբ չափաբերական գրուածքներ են մերժուած խմբագրութիւնից։ Բանաստեղծութիւնների այդ կոյտը, որ պատկանում է իհարկէ՝ բազմաթիւ հեղինակներին, «Իվերիան» տպում է խումբ-խումբ՝ ֆելիէտոն ընդհանուր վերնագրով։ Այդպիսի ֆելիէտոններ նա ունենում է ամիսը երեք-չորս անգամ, բայց դրանից անկախ շատ ոտանաւորներ էլ տպագրւում են առանձին-առանձին։ Մի ջոկ տեսակ՝ ծաղրական՝ ոտանաւորների բաժին էլ ունի նա իր կիրականօրեայ զաւեշտական ֆելիէտոնների մէջ... Մի խօսքով՝ ոտանաւոր, ոտանաւոր և ամեն տեղ ոտանաւոր... Ընդարձակ պոէմանները տպագրւում են աւելի «Մոմբէ» ամսագրում և «Ցնորիս-Փոլրցելի» լրագրում, թէև նրանց մէջ, ինչ ասել կ'ուզի, մանր բանաստեղծութիւններն անհրաժեշտօրէն կան ու կան...

Չէ կարելի ասել, թէ վրաց պարբերական հրատարակութիւնները, նամանաւանդ «Իվերիան», շատ խիստ ընտրութիւն լինեն անելիս այն գործում, բայց և այնպէս տպուածների նըշանաւոր մասը անպայման կերպով սիրուն, քաղցրալուր, տաղանդաւոր արտադրութիւններ են։ Ընթերցողը չէ կարող անտարբեր կերպով կարդալ դրանց, և դրանք գրաւում են նրան ոչ միայն իրանց բովանդակութեամբ, այլև արտաքինով։ Վրաց լեզուն կարծես մի առանձին յարմարութիւն ունի յանգի տակ ընկնելու և նա հնչւում է շատ հաճելի ու հմայիչ՝ հմուտ բանաստեղծների գործերում...

Թող ներուի մեզ մեր ընթերցողներին յայտնելու այստեղ մեր մի յանցանքը. հայ բանաստեղծութիւնների մեծ մասը մենք կարդում ենք մեծ դժուարութեամբ ու դժկամակութեամբ... Ներեցէք, սիրելի հայ բանաստեղծներ, ի՞նչ արած, որ ճշմարտութիւնն աւելի սիրելի է մարդուս, քան Պլատոնը...

Դառնանք այժմ մեր գլխաւոր խնդրին և տեսնենք, թէ ինչ լատ տանաւորներ են տպուել վրաց մամուլում վերջի նամսին։

Մենք այսուհետեւ կանոնաւոր կերպով հաշիւ կը տանք մեր դրացիներէ գրականութեան և՛ այդ կարեւոր ճիւղի մասին: Դա մեզ շատ լաւ է պատկերացնում ժամանակակից բաղմամբիւ վրացի գրողներէ զգացումներէ, տենչերէ, հայեացքներէ ու խոհերէ աշխարհը:

«Իվերիա»-ում տպուածներէցը կը յիշենք «Անդգամը», «Դիշերը», «Անմեղ» և «Մի կարծիք, վատահոգի»-ն. «Յնորիս-Փուրցելի»-իցը—երկու. անվերնագիր բանաստեղծութիւն, որոնցից մէկը պատկանում է տաղանդաւոր բանաստեղծ Ի. Էվդոշվիլուն, իսկ միւսը—Թ. Ռադիկաշվիլուն: «Անդգամի» մէջ դուրս է բերուած ցուրտ գիշերները փողոցում թափառող մի նորատի, չքնաղ աղջիկ: Նրա հայրը մեռած է, մայրը հիւանդ պառկած, փեսացուն խաբեց նրան, անպատուեց ու փախաւ... այժմ նա մարդու սիրտը կտրտող տնքոցով ծախում է իր մարմինն ու գեղեցկութիւնը, որպէսզի հիւանդ մօրը պահի ու ինքն էլ սովամահ չլինի... Նրա տեսքը ձեզ ասում է. «Ողձացէ՛ք ինձ, մեկնեցէ՛ք դէպի ինձ ձեր բարեբար ձեռքը, կարեկցութեան մի քաղցր խօսք արասանեցէ՛ք». բայց «ճիշտ յանձն կ'առնի մեր ժամանակում խղճալ մի ուրիշին. ճիշտ կը համաձայնէ ձրի օգնութիւն հասցնել մի անդգամ, ընկած կնոջը»...

«Անմեղը» ոտանաւորում հանդիսանում է մեր առաջ դարձեալ մի պոռնիկ մանկամարդ կին, շալում փաթաթուած ու նստած դրան շիմքին: Դա զանազանում է վերը նկարագրածից իր զօրեղ մտածողութեամբ: Դա իրանից անհամեմատ աւելի «աննամուտ» է համարում փողոցի միւս ծայրում անցնող մի հարուստ, ահն ու մարգարտի մէջ նստած կնոջ նման էակներին, որոնց ունեւոր մարդիկը նրանց համար ոչինչ չեն խնայում, մինչև իսկ նրանց համար «ծով» կաթ են ճարում, բոլոր քմահաճոյքները կատարում, բայց և այնպէս այդ «նամուտով» կանայքը գաղտնի դաւաճանում են այրերին ու սիրողներ պահում... Մեր թշուառ պոռնիկը սարսափելի կերպով ասում է համարեա բոլոր տղամարդկանց, որովհետեւ նրանք, չնայած իրանց աստուածային պատկերին՝ օձ են սրտով և միշտ նրա մասին են մտածում, որ մի աղջիկ ձեռքները գցեն, գողանան նրա գանձը (անարատութիւնը) ու անպատուած մի կողմ շարժւանեն... Շարուն է խեղճը մէկ-մէկ իր գլխում այդ դառն-դառն մտքերը ու հետն էլ աշխատում գրաւել ու ներս հրաւիրել անց ու դարձ անողներին. թէև տղամարդուն տեսնելը բուռն զգուանք ու վրէժի պահանջ է յարուցանում նրա մէջ, բայց նա լաւ գիտէ, որ եթէ այդ գիշեր փող չճարի, միւս օրը քաղցած կը մեռնի...

«Գիշեր» բանաստեղծութիւնը, որ գրել է պ. Ախոսպիրեւի-ն, մենք առանց տատանուելու կարող ենք կոչել մի հրաշակերտ: Մի ցուրտ ու մրկալից գիշեր մենք գտնում ենք հեղինակին բաց երկնքի տակ, մռայլ ու սրտամաշ խոկերով ծանրացած: Երկինքն ու երկիրը չեն կարողանում յագեցնել նրա ծարաւը, կշտացնել նրա աչքը: Մարդկային ազգի սպանիչ աշարհաբլուրները շարան-շարան անցնում են նրա մտքովը: Տեսնում է նա թառամած դէմքեր, հանգած աչքեր, անչափ աշխատանքից ուժասպառ կոններ, թունաւոր կեանքի զոհեր, շարունակ լուսաբացին սպասող անձեր, ցուրտ գերեզմաններ, և այդ ամենը մահացու կերպով քրքրում, խոցոտում են նրա սիրտը: «Ո՛հ դուք,—գոչում է նա սրտակէզ—դուք, որ կամենում էք սգալ ձեր ծանր վիշտն ու կսկիծը, դուք, որ կորցրիք ձեր երջանկութեան աստղը, դուք, որոնց համար հանգել է լուսինը, դուք, որ շարունակ լալիս էք ու լալիս և չգիտէք, թէ ինչ է ուրախ օրը,—դուք ամենքդ միացէք ինձ հետ և եկէ՛ք նետենք մեր սրտի ամբողջ թախիծը կեանքի երեսին»...

Ո՞րը տպաւորութիւն է թողնում այդ գրուածքը: Եւ իր յիսուն տողի մէջ այնքան բան է ասել պ. Ախոսպիրեւին, որ մի ուրիշը կարող էր ձգձգել ամբողջ տասը երեսի վրայ:

«Մի կարծիք, վատահոգի» ոտանաւորը մի թոթուռ մարդասիրական քարոզ է, որի մէջ հեղինակը իր աշխոյժ լիբիկական գեղմունքներով բացատրում է, թէ ինքը ամեն օր և ամեն բոլոր միայն մի բան է մտածում—թեթեւացնել եղբայրակցի, ընկերոջ ցաւը, զոհուել նրա բարօրութեան համար...

Անցնենք այժմ «Յնորիս-Փուրցելի» լրագրի կողմը:

Այդտեղ մենք մատնանիշ արինք երկու արտադրութեան վրայ:

Արագվա գետը, վազելով Կովկասեան լեռների միջով, գալիս միանում է Կուր գետին Վրաստանի նախկին մայրաքաղաք Մցխեթի կողքին: Արագվայի ափերը այդ կողմերում յիշեցնում են շատ պատմական անցքեր, կրում են իրանց վրայ շատ հոյակապ շինութիւնների փլատակներ. Մցխեթը իր շրջականերով վրաց նշանաւոր սրբավայրն է: Արագվան այդ կողմից յիշեցնում է մեր սրբազան Արաքսը, որի անունը անխոզի կերպով կապուած է անմահ Գամառ-Քաթիպայի հետ: Աւելի բախտաւոր էր «Մայր-Արաքսը», որ դեռ ևս քառասուն տարի սրանից առաջ գտաւ իր արժանաւոր երգչին, մինչդեռ Արագվան միայն այսօր է արժանանում այդ պատուին՝ յանձնել երիտասարդ բանաստեղծ պ. Թ. Ռազիկաշվիլիին...

Վշտաբեկ մօտենում է դա Արագվային ու ողջունում նրան.

ծուներ է դնում ու համբուրում սուրբ երկիրը. նրա աչքերը շլանում են... յիշում է միառմի նախնիների երախտքը. չորս կողմը նա տեսնում է աւերակներ և անձնուրաց մարդկանց սկզբներով լի գերեզմաններ. ոչ մի տեղից ձայն չի գալիս... անմխիթար այցելուն աղաչում է գետին հառաչելով, որ մի բան ասի, մի յոյս տայ իրան կամ լացացնի՝ սև օրերի պատմութիւնն անելով, կամ ահեղ ձայներով դատապարտի այժմեան վրացիների պակասութիւնները: Արագվան կարծես կանգ է առնում ու սկսում է խօսել զայրացած. խօսում է- ու համեմատում հին ու նոր վրացիներին և շատ անմխիթար հետևանքներ հանում... ապա հառաչանքներ է արձակում վրդովուած գետը, տնքում, արտասուում և այդ արտասուելից կոհակներով իր ճանապարհը շարունակում...

Լրագրի միւս աշխատակից պ. Ի. Էվեօշվիլին տալիս է մեզ գիշերային բնութեան խորհրդաւոր ու հրաշալի նկարագրութիւն: Բնութեան վեհ լուսեան մէջ բանաստեղծին լսելի է լինում՝ մերկացած անտառի կողմից՝ ճիւղերի մեղմ սօսափելւ: Նրան թւում է, թէ այդ՝ ձայներ են իր եղբայրակիցների գերեզմաններից: Լուսինն էլ նայում է վերեւից այդ վաղաժամ փորած շիրիմներին և չէ համարձակւում լալ. լուռ է նոյնպէս հայրենի աշխարհը: Իրա փոխարէն մի քնքոյշ հովիկ փարւում է այդ անարձան գերեզմաններին, բնութիւնն էլ՝ ծածկուած սև ամպերով՝ լուռ մտածում է...

Եւ այսպէս, մենք ընտրեցինք վերջին ամսում տպագրուած ոտանաւորներից միայն վեցը: Այդ ընտրութիւնն անելիս մենք աչքի առաջ ունէինք ոչ թէ միայն նրանց բովանդակութիւնը, այլ մի ընտիր բանաստեղծութիւնից պահանջուող բոլոր պայմանները: Ժամանակակից վրացերէն ոտանաւորների նիւթը շատ բազմատեսակ է...

Այսօր վրաց բանաստեղծական գրականութիւնը համարեա թէ բացառապէս երիտասարդ գրողների ձեռքին է. ծերերը կամ բոլորովին լուռ են և կամ «լուսնէ լուսին» են երևում: Մենք տեսնում ենք, որ այդ երիտասարդ ոյժերը աշխատում են, նրբանց միտքը նոր ճանապարհներ է գտնում, նրանց ուղեղը թարմ է...

Վրաց ընթերցող հասարակութիւնը անհամեմատ երջանիկ է, վայելելով այդ գեղարուեստական մարգարիտները:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ